Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

809

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՍԻ ՏԱՍԵՐՈՐ



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1890—ՌՃԼԹ

203.5
G-78

Բ 2001

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԵՐԱՆԻ Ս. ԿԷԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

1890—ՌՅԼԹ

203.5
Ա-78
Ա.

34092-Ա.Հ.

ՄԱՅՐԱՊՈՂԱՔԱՂԱՔ

ՎԱՇՄԱՎԱՆՔԻ ԳՅՈՒՂ

ՎԵՂԱՆՑԻ ՊՏՈՒՄ

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՄԱԿԱՐԱՑԱ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Արա.ССР
(4737-55)
17017-58

2012



ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

Մայր եկեղեցին Ս. Էջմիածին Քրիստոնէական հաւատոյ ազդեցութեամբ և իւր անդրդուելի գոյութեամբ արդարև Աստուծոյ առանձին տեսչութեամբ նշանակած է լինելու Հայոց ազգիս կրօնական կենդրոնն և Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական նախամեծար մայր Աթոռն, ինչպէս հաւաստում են և պատմական հանգամանքները: Բայց սա առաջին եկեղեցին չէ Հայաստանում, վասն զի մեր Արգար Թագաւորը դեռ մեր Փրկչի՝ Քրիստոսի մարդեղութեան ժամանակ լսելով նորա հրաշագործութեանց և հրաշալի բժշկութեանց համբաւը հաւատաց նորա Աստուածային զօրութեան և փութով դեսպաններ ուղարկելով հրաւիրեց նրան, որ գայ ու բժշկէ իրան բազմաժամանակեայ հիւանդութիւնից: Յիսուս խոստացաւ տալու նրան բժիշկ իւր ժամանակին և Քրիստոսի համբարձումից ու Հոգւոյն Սրբոյ գալստից յետ Թադէոս առաքեալն եկաւ Հայաստան ոչ միայն Աստուածահրաւէր արքային բժշկելու համար, այլ և Աստուծոյ բանն աւետարանելու և բոլոր Հայաստանում քրիստոնէական անարատ և անբիծ հաւատը քարոզելու:

Եւ այսպէս Նորա ու Ս. Բարթուղիմէոսի և ապա այլ սուրբ առաքելոց և Փրկչի աշակերտաց քարոզութեամբ Հայաստան աշխարհն մեր լուսաւորուեցաւ սուրբ հաւատով: Սոքա շատերին աշակերտեցին, Հայաստանի զանազան գաւառներում բազմաթիւ եկեղեցիք կառուցին և իրանք նահատակուեցան Փրկչի անուան համար: Ուրեմն քրիստոնէութեան հէնց սկզբում Թադէոս առաքեալը Հայաստանում հաստատեց առաջին Քրիստոնէական եկեղեցին, որ անդրանիկն է համարուում հեթանոս ազգաց մէջ, ինչպէս հաստատում են այդ թէ ազգային պատմաբանք ու աւանդութիւնք, և թէ եկեղեցական ու աշխարհական օտարազգի ժամանակագրութիւնք:

Իսկ սուրբ Էջմիածնի մայր Տաճարը շինուեցաւ Տրդատայ թագաւորութեան ժամանակ 303 թուականին մեր երկրորդ Լուսաւորչի՝ Ս. Գրիգորի հրաշալի տեսիլքով, Ս. Գրիգորի, որ բազմատեսակ սոսկալի չարչարանքներ կրեց քրիստոնէական հաւատի համար մեր դեռ ևս հեթանոս Տրդատ թագաւորից, բայց Աստուծոյ գերահրաշ շնորհքով կենդանի և անվնաս մնաց:

Այս այն Տրդատն է, որ լսելով թէ Գրիգորը նորա հօր Խոսրովին սպանող Անակ իշխանի որդին է, հրամայեց նրան Արտաշատ ամրոցի Խոր—Վիրապը գցել, ուր սովորաբար գցում էին մահապարտներին, որոնք քաղցից, շնչարգել օդից, օձերի ու կարիճների և այլ բազմատեսակ թունաւոր զեռունների խայթոցների ազդեցութիւնից շուտով զրկուում էին երկրաւոր կեանքից:

Բայց մեծ կենդանի նահատակն ըստ Աստուծոյ կամաց հրաշքով տասն և հինգ տարի անվնաս մնաց զարհուրելի վիրապում, մխիթարուած միայն Աստուծոյ վերին նախախնամութիւնից, որի ազդմամբ մի այրի ադքատիկ կին ամեն օր բերում էր մի նկանակ և գցում վիրապի մէջ Ս. Գրիգորի մարմնաւոր սնունդի համար:

Այն ժամանակներն պարկեշտ կոյսերի մի խումբ Հռովմից Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից փախչելով իրանց անարատ կուսութեան ապաստանարան Հայաստանումն էին որոնում և Վաղարշապատ մայրաքաղաքը հասնելով այդիներից մէկի հնձանում թաքնուեցան: Բայց Տրդատ իմանալով Դիոկղետիանոսի հրովարտակից, որով նա խնդրում էր Հայաստանի սահմաններում որոնել փախ-

տական կոյսերին և վերադարձնել իրան, հրաման տուեց անյապաղ գտնել կոյսերին, որոնց և գտան Վաղարշապատ մայրաքաղաքի մօտ: Երբ Տրդատը լսեց կոյսերից մէկի՝ Հռիփսիմէի տարօրինակ գեղեցկութեան համբաւը, կամեցաւ նրան տեսնել. և յափշտակուեցաւ նորա սիրով. ուստի չկամեցաւ այլ ևս վերադարձնել կոյսեր, այլ ուզեց իրան հարնացնել: Բայց չկարողանալով իւր ըղձալի նպատակին հասնել, թագաւորը բարկանալով Հռիփսիմէի դիմադրութեան համար, հրամայեց նրան և նորա ընկերուհիներին չարչարելով սպանել: Սրանից յետոյ իսկոյն Տրդատն և պալատականները երկնասաստ պատուհասի ենթարկուեցան, կատաղութեամբ պատառեցին իրանց զգեստներն և վայրի գազանների պէս թափառում էին մացառներում և լերան ծմակներում: Այն ժամանակ Տրդատի քոյր Խոսրովիդուխտը տեսիլքով հրաման ստացաւ Արտաշատի վիրապից հանել բազմաչարչար Գրիգորին, որովհետև միայն սա կարող էր բժշկել պատուհասուածներին:

Սկզբում Խոսրովիդուխտի խօսքերը ամենքին ծաղրալի և անհաւատալի թուեցան, բայց երբ տեսիլքը շատ անգամ կրկնուեցաւ, Օտա նախարարն Արտաշատ ուղարկուեցաւ: Սա փութով հասաւ այնտեղ և երանելոյն յիրաւի կենդանի գտնելով հանեց խորվիրապից: Բորբոսնած և փտած շորերը, գլխի ու մօրուքի երկարացած ու սպիտակացած մազերն, երեսի սևութիւնն ու մարմնոյ կոշտութիւնն երանելի Գրիգորին մեռելի նման էին արել, այնպէս որ տեսնողի սիրտը ճմլուում էր, արտասուքը գալիս և կարեկցութիւնը շարժուում:

Օտայ նախարարի հրամանով իսկոյն լուացին ու մաքրեցին սուրբի մարմինը, հագցրին նոր զգեստներ և մեծ պատուով տարան Վաղարշապատ, ուր Տրդատ թագաւորը, նախարարներն և խուռն բազմութիւն ժողովրդեան նորա առաջը դուրս գալով խնդրում էին նրանից իրանց հոգւոյ և մարմնոյ փրկարար բժշկութիւնը: Այս հանդիպումն եղաւ Վաղարշապատի արևելեան կողմում, մի բլրի վերայ, ուր այժմ երևում են մի մեծ եկեղեցու աւերակներն, որոնք կոչուում են Զուարթնոց կամ Առապարի սուրբ Գրիգոր եկեղեցւոյ աւերակներ:

Սուրբ Գրիգորը տեսնելով Տրդատ Թագաւորի և նորա հետ միասին պատուհասուածների ողորմելի և մղեղին դրութիւնը աղօթելով մաղթում էր բարձրեալ Տիրոջից, որ իւր անբաւ մարդասիրութեամբ ներէ նրանց ու տայ հոգւոյ և մարմնոյ առողջութիւն: Շատերը նորա արժանի աղօթքով ստացան բժշկութիւն և հոգւով զգաստացած խոստովանում էին իրանց յանցանքներն և սրբից թողութիւն խնդրում:

Երանելի սուրբ Գրիգորն այնուհետև սկսաւ իւր աստուածային վարդապետութիւնն և սուրբ աւետարանը քարոզելով ազգու խօսքերով յորդորեց ամենքին թողնել կռապաշտութիւնն և ճանաչել ու ընդունել ամենասուրբ երրորդութեան՝ Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյ Աստուածութիւնը: Սուրբն Գրիգոր հրամայեց Հռիփսիմեանց սուրբ կոյսերի մարմինները ժողովել և իւրաքանչիւրին իւր նահատակութեան տեղում ամփոփել իւրեանց զգեստներով և կանգնել նոցա վերայ վկայարաններ:

Մինչդեռ սուրբը շարունակում էր իւր վարդապետութիւնն և բոլոր ժողովրդեան ուսուցանում էր կենաց բանը, մի գիշեր երևեցաւ նրան Աստուածային սքանչելի տեսիլ: Ցանկարծ լուսեցան սաստիկ թնդմունք և ահաւոր որոտմունք, երկնքի հաստատութեան յարկը բացուեցաւ, պայծառ լոյս իջաւ վերևից մինչև երկիր և բազմութիւն հրեշտակաց լուսեղէն թևերով ու մարդկային կերպարանքով լոյսի հետ իջնում էին ներքև: Եւ ահա ահաւոր կերպարանքով և բարձրահասակ մի մարդ ոսկեայ ուռն ձեռքում ու շրջապատած հրեշտակներով հասաւ Վաղարշապատի շինամէջն, ահեղ զօրութեամբ բաղխեց ոսկեայ ուռնով երկիրն, որից լսուեցան որոտմանց և սարսափելի թնդմանց զարհուրելի ձայներ: Սրանից յետոյ արքունի պալատի վրայ երևում է մեծ և բարձր բլրի մեծութեամբ ճախարակի ձևով ոսկեայ խարիսխ, սորա վերայ էլ մի հրեղէն սիւն և սեան վերայ ամպեղէն գմբէթ, որոյ վերայ փայլում էր լուսաճաճանչ խաչը: Մինչդեռ սուրբ Գրիգորը ապշած կանգնած էր, Աստուծոյ հրեշտակը բացատրում էր նրան տեսիլքը. «այն ահաւոր կերպարանքով մարդը Աստուծոյ տեսչութիւնն է, Ոսկի խարիսխը՝ անշարժութիւն և անդրդուելի հաստատութիւն է, Հրեղէն սիւնն ոսկի

խարսխի վերայ Հայաստանեայց կաթուղիկէ եկեղեցին է, Գմբէթն ամպեղէն արդարոց բնակարանն է, իսկ մեծ լուսաւոր խաչը՝ մեծ Քահանայապետութիւնն է: Եւ այնտեղ թող լինի Աստուծոյ տաճար, աղօթքի տուն բոլոր հաւատացելոց համար ու քահանայապետութեան Աթոռ»:

Միւս օր առաւօտը վաղ սուրբ Գրիգորը շտապեց պատմել այս սքանչելի տեսիլը Տրդատ Թագաւորին, նախարարներին և բոլոր ժողովրդեան ու պատուիրեց հրեշտակի ցոյց տուած տեղը քարեայ պարսպով պատել: Իսկ Տրդատ Թագաւորին, իշխաններին, նախարարներին և ժողովրդից էլ շատերին մկրտելից յետ սուրբն Գրիգոր ձեռնարկեց կառուցանելու այն տեղում Մայր Տաճարն, որի շինութեան Տրդատ Թագաւորն և Աշխէն Թագուհին, Թագաժառանգ Խոսրովն և Թագաւորի քոյր Խոսրովիդուխտն, իշխաններն ու նախարարներն և բոլոր ժողովուրդն ոչ միայն նպաստում էին նուիրատուութեամբ, այլ և անձամբ աշխատում էին և ծառայում և այսպէս Ս. Էջմիածնայ եկեղեցին փութով կառուցուեցաւ 303 թ. և դարձաւ Հայաստանեայց եկեղեցիների Մայրն և ամենայն Հայոց մեծ Քահանայապետի Աթոռը:

Այս տաճարը երկար ժամանակ չմնաց պայծառ դրութեան մէջ, որովհետև 381 թուականին ուրացեալ Մեհրուժան Արծրունին Պարսից զօրքերով Հայաստան գալով այլ քաղաքների ու աւանների հետ աւերեց և Վաղարշապատն ու Սուրբ Էջմիածինն էլ, կողոպտելով սորա բոլոր զարդերը: Հարիւր տարուց յետոյ Վահան Մամիկոնեան քաջ նախարարը Պարսից Թագաւորի հրովարտակով Մարզպանութեան պատիւ ստանալով 483 թ. վերանորոգեց Ս. Էջմիածնի Տաճարը:

Վահանի արած վերանորոգութիւնը չէ կարելի համարել առաջին, որովհետև Մեհրուժանի աւերումնից յետ Ս. Էջմիածնի տաճարը շարունակ հարիւր տարի չէր կարող առանց նորոգութեան մնալ: Թէև պատմագիրք չեն յիշատակում թէ երբ և ում ձեռքով նորոգուեցաւ Ս. տաճարը Մեհրուժանի աւերածութիւնից յետ, սակայն անհերքելի կարելի է համարել վերանորոգումն:

Ապա 618 թուին Կոմիտաս Կաթուղիկոսը Հռիփսիմէ կոյսի գե-

ղեցկաշէն վկայարանն աւարտելից յետ, սկսաւ Հոդալ Ս. Էջմիածնի կարեւոր վերանորոգութեանց համար և փայտեայ կաթուղիկէի փոխանակ շինել տուէց սրբատաշ կոփածոյ քարերով կաթուղիկէ, որի վերայ կանգնեցրեց մեծ Խաչն, որ 982 թուականին մի Պարսիկ զօրապետ Ապլ Հաջի անունով, Դուին քաղաքին տիրելից և շատ եկեղեցիք կործանելից յետ, հրամայեց պարանով կորզել Տաճարի գլխից:

Սրանից յետոյ մեր պատմութեանց մէջ յիշատակութիւն չէ լինում Ս. տաճարի նշանաւոր նորոգութեանց մասին մինչև Կիրակոս Ա. Վիրապեցի կաթուղիկոսի ժամանակն, որ Թոմա Մեծոբեցոյ ասելով 1442 թուականին նորոգեց այն: Սրանից յետ մինչև Մովսէս Գ կաթուղիկոսը նոյնպէս չէ յիշատակուում Տաճարի որևէ նորոգութիւնը:

Պարսից Շահաբաս Ա թագաւորը բռնութեամբ Պարսկաստան գերեվարուած Հայերի անսահման սէրն և ձգտումն դէպի Էջմիածինը տեսնելով կամեցաւ քակել այն և նորա քարերն ու հողը Պարսկաստան տեղափոխելով այս տեղ կառուցանել նոր եկեղեցի յանուն Էջմիածնի. բայց յետոյ մի Հայ իշխանի խորհրդով և ազդեցութեամբ փոխեց իւր դիտաւորութիւնն ու հրամայեց 1614 ին Մայր Տաճարի շինուածից կորզել տասն և հինգ նշանաւոր քարեր, որոնք ուղարկուեցան Նոր-Ջուղայ:

Այս ժամանակները Էջմիածնի Տաճարն արդէն քայքայեալ վիճակի մէջ էր, որոյ մասին Առաքել պատմագիրը գրում է. «Եւ սալայարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ՝ եղեալ որջ գեռնոց և թռչնոց, և մեծամեծ լուսամուտքն, զորս ունի, կային առանց շրջանակի և ապակւոյ և այլն, իսկ արտաքուստ կուսէ գլուխ կաթուղիկէին և տանիքն ամենայն և երեսք որմոցն քայքայեալ և քարինք թափեալք և որմոց յատակաց վէմքն փշրեալք և ծակոտեալք»:

Ուստի և Սիւնեցի Մովսէս Գ կաթուղիկոսը դեռ իւր վարդապետութեան և լուսարարութեան ժամանակ սկսաւ կաթուղիկէի, տանիքի և պատերի նորոգութիւնքն, որոնք և աւարտեց իւր կաթուղիկոսութեան ժամանակ 1627—1633 թ.

Մովսէսի աշակերտն և յաջորդը՝ Փիլիպպոս կաթուղիկոսը 1633 ին վերանորոգումէ բացի կաթուղիկէից և տաճարի բոլոր տանիքը

կոփածոյ քարերով և յետոյ գնալով Երուսաղէմ ու Կ. Պոլիս, իւր վերադարձից յետոյ 1654 ին ձեռնարկում է տաճարի արևմտեան կողմում մեծ զանգակատան շինութեան, բայց այս գործը չաւարտած վախճանում է:

Նորա յաջորդ Յակոբ Բ կաթուղիկոսը աւարտում է զանգակատան շինութիւնը սրածայր, թեթև կաթուղիկէի, զարդարելով այն գեղեցիկ քանդակագործութեամբ, որ ամենքի ուշադրութիւնը գրաւում է: Զանգակատունը բաղկացած է երեք յարկերից, որոնցից վերինը՝ կաթուղիկէն կանգնած է ութը փոքրիկ բոլորակ սիւների վերայ, իսկ ներքին յարկերն իւրաքանչիւրը չորս սիւների վերայ:

Ապա 1682 թ. Եղիազար Կաթուղիկոսը շինումէ երեք փոքրիկ զանգակատուններ Տաճարի արևելեան, հարաւային, և հիւսիսային կողմերում:

Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսը նորոգումէ տաճարի յատակն և չորս մեծ սիւներն, որոնց վերայ հաստատուած է մեծ կաթուղիկէն չորս կողմերի կամարներով:

Սիմէոն Կաթուղիկոսը նորոգումէ եկեղեցու բոլոր տանիքն արտաքուստ և ներքին երկու սիւներն. իսկ Ղուկաս Կաթուղիկոսը նորոգումէ արտաքին քարաշէն աստիճանները:

Բայց Սիմէոն Կաթուղիկոսի նորոգած տանիքը շուտով քայքայուում էն, որովհետև երբ 1804 թ. Ռուսաց զօրքը գալիս է Արարատեան աշխարհը, Պարսիկ զինուորները բարձրանալով եկեղեցու տանիքն ամրանում են այնտեղ իբրև ամրոցում և տեղ տեղ կրակ վառելով աւերում են տանիքն, որոյ քարերը կրակից փշրուելով թոյլ են տալիս անձրևի ջրերին թափանցելու պատերի մէջ, որով մեծ վնաս է հասնում Կաթուղիկէին և Տաճարին: Ուստի և Եփրեմ Կաթուղիկոսը 1816 թուականին վերանորոգեց բոլոր տանիքը սրբատաշ քարերով:

Գէորգ Դ Կաթուղիկոսը 1867 թուին նստելով Հայրապետական գահը և տեսնելով Ս. Տաճարի պահարանի (խորան) անձկութիւնն, ուր ամփոփուած էին սրբոց նշխարք և եկեղեցական զգեստք ու անօթներն, որոնք խառն ՝ի խուռն միմեանց վերայ դիզուած էին,

ձեռնարկեց կառուցանելու երեք ընդարձակ գմբէթայարկ պահարաններ, որոնք նախկին երկու փոքրիկ հիւսիսային և հարաւային աւանդատների միջոցով արևելեան կողմից միացան Ս. Տաճարի հետ: Աւանդատների միջով է մուտքը դէպի երեք ընդարձակ պահարանները: Հարաւային պահարանում ընկուզեայ գզրոցների մէջ պահւում են հանապազօրեայ գործածելի եկեղեցական սպասք և անօթք: Այստեղ Գէորգ Դ Կաթուղիկոսը կանգնել տուեց սեղան յանուն Ս. Գէորգայ, դրեց Ս. Գէորգ զօրավարի պատկերն և Օծեալ խաչ սեղանի ճակատին: Այս պահարանի բանալին գտնուում է աւագ լուսարարի ձեռքին: Երկրորդ պահարանում պահպանուում են նոյնպէս գեղեցիկ դարաններում Ս. Գեղարդը, Կենաց փայտն և այլ շատ սրբերի նշխարք: Այստեղից էլ է դուռն երրորդ պահարանի, ուր գտանվում են ամէն տեսակ եկեղեցական և այլ հնութիւնք: Երկրորդ պահարանն ունի երկաթեայ դուռն, որ երկու բանալիներով է կողպուում, որոց մինը գտանուում է Սինօդի նախանդամի մօտ և միւսը Վեհափառ Հայրապետի. դուռը մի բանալիով չէ բացուում: Երրորդ պահարանը (թանգարանը) մտնել կարելի է և հիւսիսային աւանդատան միջով:

Էջմիածնայ տաճարն ունի 35 լուսամուտներ, որոնց 12ը մեծ կաթուղիկէի շուրջն են, ութը հիւսիսային, եօթը հարաւային և ութ արևմտեան պատերի մէջ են, թանգարանն էլ ունի տասն և մէկ պատուհան, ընդ ամէն 46: Լուսամուտներից շատերը փակած էին երկար ժամանակ թշնամեաց երկիւղից, բայց Մատթէոս Կաթուղիկոսի հրամանով բաձուեցան նորից, որով թէ եկեղեցին աւելի լուսաւորուեցաւ և թէ նպաստեց նորա խոնաւութեան առաջն առնելուն:

Մայր եկեղեցին ունի երեք գեղեցիկ դռներ. աւագ դուռը արևմտեանն է, երկրորդ և երրորդ դռները հիւսիսային և հարաւային կողմերումն են: Ներկայ վեհափառ Մակար Կաթուղիկոսի ժամանակ այս դռներն ընդարձակուեցան և շինուեցան նոր դռներ. նոր դռները գեղեցկաշէն են և հայկական ճաշակով շինած: Արևմտեան մեծ դուռը յիշատակ է աւագ սարկաւագուհի Հռիփսիմեայ Թահիրեանց, հարաւայինը յիշատակ է Եփրոսինէ կուսին Աբամելիքեան և հիւսի-

սայինը յիշատակ է Տէր Գէորգ քահանայի Կալատեան, 1889 թ. Բացի սրանցից հարաւային կողմում երևումէ մի դրան տեղ, որի մասին աւանդութիւնն ասում է, որ այն դռնով մտնելիս և ելանելիս են եղել հայրապետք, թագաւորք և սոցա ընտանիքն և կոչուում է Տրդատայ դուռը:

Հին ժամանակ Մայր տաճարը մի դաս է ունեցել եկեղեցականաց համար աւագ սեղանի առաջ, իսկ երբ Եղիազար կաթուղիկոսի ժամանակ կանգնեցաւ Իջման տեղի վերայ պատարագելու սեղան, սորա առաջ էլ քարեայ ցածր պատով որոշուեցաւ երկրորդ դասը եկեղեցականաց համար: Այստեղ դրուեցաւ և հայրապետական առանձին Աթոռ, որոյ համար ասումեն, թէ Ինոկենտիոս ԺԲ պապի նուէրն է: Առաջին դասը պատած է գեղեցիկ երկաթեայ վանդակներով, որոնք Թիֆլիզի առաջնորդութեան ժամանակ Նորին Օծութիւն ներկայ հայրապետը յորդորեց շինել տալ Պ. Միք. Թամամշեանցին, ինչպէս վկայում է վանդակի վերայ ամրացրած պղնձեայ տախտակն, որ ունի հետևեալ արձանագրութիւնը. «Շինեցան երկաթեայ վանդակք արդեամբ Տփխիսեցի ազնիւ Միքայէլի Գէորգեան Թամամշեանց յարևշատութիւն նորածաղիկ որդւոց իւրոց և ՝ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ հօր իւրոյ Գէորգայ Յովհաննէսեան Թամամշեանց ՝ի դուռն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ձեռամբ Վրաստանի Հայոց Առաջնորդի Մակար Արքեպիսկոպոսի ՝ի Հայոց թուին ՌՅԺԹ և Փրկչական 1870 թ.»: Վանդակներն երեք դուռն ունին՝ մէջ տեղումաւագ սեղանի դիմացն և հարաւային ու հիւսիսային ծայրերում:

Մայր տաճարս այժմ եօթը սեղան ունի: Առաջինը՝ աւագ սեղանը շինած է մեր երկրորդ լուսաւորիչ Ս. Գրիգորի ժամանակ և երբեմն նորոգուած: Այս սեղանը տաճարի արևելեան կողմումն է կամարակապ բարձր խորանում և նորա բեմը բարձր է յատակից. հինգ աստիճանաւոր սանդուխքով բարձրանում են նորա վերայ: Բեմի մարմարոնեայ ճակատի վերայ նկարուած են տասներկու առաքելոց պատկերները ունելով մէջ տեղում Ս. Մարիամ Աստուածածնայ պատկերը մանուկ Փրկիչը գրկում, իսկ երկու ծայրերում նկարած են Ս. Ստեփաննոս և Փիլիպպոս սարկաւագների պատկերները: Այս

սուրբ սեղանն 'ի սկզբանէ անտի Ս. Գրիգոր լուսաւորիչը նուիրած է Ս. Աստուածածնին և նորա տօնը կատարուում է Վերափոխման շաբաթ օրը: Նորա փայտաշէն ոսկեզօծ գեղեցիկ խաչկալը, իւր հիւսիսային և հարաւային դռներով, ընծայած են Զմիւռնիոյ ժողովրդականք Աստուածատուր կաթուղիկոսի ժամանակ. խորանի հիւսիսային որմի մէջ է խորհրդանոցը:

Աւագ սեղանի աջ և ձախ կողմերում նոյն գծի վերայ, միայն փոքր ինչ ցած, կան երկու փոքրիկ սեղաններ, որոնք 1730 թ. կանգնել է Աբրահամ Բ Կաթուղիկոսն, և որոնց աջակողմեանը յանուն Որդւոց Որոտման է, իսկ ձախակողմեանը յանուն Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի: Այս երկու փոքրիկ սեղաններն երբեմն ունէին գեղեցիկ փայտաշէն քանդակագործ խաչկալներ՝ յիշատակ Աբրահամ Բ Կաթուղիկոսի, բայց իրենց հնութեան պատճառով նուիրուեցան Վաղարշապատու ժողովրդական եկեղեցւոյն Մատթէոս Ա կաթուղիկոսի հրամանով և նոցա փոխարէն նորերը շինուեցան:

Ի ներքուստ մայր տաճարի դիրքը խաչաձև է, հարաւային կամարի խորութիւնում Ս. Յովհաննէս Մկրտչի սեղանն է, երեք աստիճան բարձրութեամբ և ունի փոքրիկ գեղեցիկ քարեայ սրածայր կաթուղիկէ, հաստատուած չորս բոլորակ սիւների վերայ: Այս սեղանի վերայ զգրոցաձև դարանի մէջ պահուում է սովորաբար միջակ մեծութեան արծաթեայ կաթսայն Սրբալոյս միւռոնի: Եպիսկոպոսական ձեռնադրութեան ժամանակ այս բեմի վերայ եպիսկոպոսունք զգեստաւորուելով, իրանց առաջ ունելով եկեղեցւոյ ուխտն այն է երկու քահանայ, երկու սարկաւագ, երկու կիսասարկաւագ, երկու ջահընկալ, երկու երդմնեցուցիչ, երկու սաղմոսասաց, երկու դռնապան, իրանց յատկացրած զգեստներով և երկու իշխան ու երկու աղքատ, վառած մոմեր ձեռներին, իբրև եպիսկոպոսացուի վկաները զոյգ զոյգ գալիս են դէպի հիւսիսակողմն հայրապետական աթոռի առաջ և կանգնում են: Եկեղեցւոյ հիւսիսային կողմում նոյնպէս կայ սեղան յանուն Ս. Ստեփաննոսի Նախավկայի Եօթն աստիճան բարձրութեամբ, նման Ս. Յովհաննու սեղանին քարեայ կաթուղիկէով, հաստատուած չորս սիւների վերայ: Այս սեղանի երկու կողմերում պատին կպած շինած են երկու քարեայ նստարաններ,

իւրաքանչիւրը վեց հոգու համար և այս նստարանների վերայ միմեանց դէմ յանդիման նստում են եպիսկոպոսունք: Իսկ Հայրապետը բեմի մէջտեղում բազմած առանձին գահի վերայ ձեռնադրելի եպիսկոպոսի կոչման ժամանակ լսում է վկաների վկայութիւնը ձեռնադրուողի հոգևոր և մարմնաւոր արժանաւորութեանց մասին և եպիսկոպոսացուի բանաւոր դաւանութիւնն, ըստ կանոնաց Հայաստանեայցս Ս. եկեղեցւոյ: Իսկ եպիսկոպոսների ձեռնադրութիւնը, Կաթուղիկոսի օծումն և Միւռոնի օրհնութիւնը կատարուում են Աւագ սեղանի վերայ: Այս երկու սեղանները Ս. Յովհաննէս Մկրտչի և Ս. Ստեփաննոս Նախավկայի նորից շինեց Եղիազար Կաթուղիկոսը 1684 թուականին:

Տաճարի կենդրոնատեղում, Մեծ կաթուղիկէի տակ, կանգնած է փոքրիկ սեղան այն տեղում, ուր ըստ սքանչելի տեսլեան Ս. Գրիգորի իջաւ Միածինն ու ոսկեայ ուռամբ բաղխեց և որ կոչուում է 'ի սկզբանէ անտի Իջման տեղի: Այստեղ վաղ սեղան չկար, այլ դրած էր յատակից բարձր տապանաքարի նման մի սրբատաշ քար, որ ծածկած էր ոսկեթել և արծաթաթել ծածկոցով, ինչպէս վկայում է պատմագիր Առաքել վարդապետը:

Առաջինն Եղիազար Կաթուղիկոսը կանգնեց այստեղ սեղան փոքրիկ կաթուղիկէով չորս սիւների վերայ: Յետոյ Աստուածատուր Կաթուղիկոսը 1720 թ. բոլորովին վերանորոգեց այն, նորա կաթուղիկէն և չորս սիւները սպիտակ մարմարիոնից շինելով ու նկարներով զարդարելով. իսկ յատակը ծաղկանկար սև մարմարիոնից, տաճարի յատակից երեք աստիճան բարձր: Իսկ 1732 թ. Աբրահամ Բ Կաթուղիկոսը այս սեղանը քառակուսի շրջափակեց գեղեցիկ և ամուր պղնձեայ վանդակներով, արևմտեան և հարաւային կողմերում փոքրիկ դռնակներ թողնելով:

Եօթներորդ սեղանը շինած է արևմտեան Մեծ զանգակատան երկրորդ յարկում յանուն Գաբրիէլ և Միքայէլ հրշտակապետների. այստեղ երբեմն պատարագ մատուցանում էին Քրիստոսի Համբարձման և հրեշտակապետաց տօներին: Մայր տաճարում սուրբ պատարագը յաճախ մատուցանուում է աւագ սեղանում և շատ անգամ Իջման տեղում. իսկ միւս սեղաններում միայն նոցա տօների օրերին:

Ի ներքուստ տաճարի պատերն, կամարներն ու սիւները զարդարած են քաջարուեստ նկարչութեամբ, իսկ տերունական, առաքելական և հայրապետական ու սրբոց պատկերները նկարած են կտաւի վերայ և կպցրած որմերի և սիւների վերայ առանց շրջանակների: Ծաղկանկարները մանաւանդ կամարների վերայ և խարիսների մօտ շատ վնասուած են խոնաւութիւնից:

Տաճարին շքեղութիւն են տալիս երկու հոյակապ փառաւոր հայրապետական գահոյք, որոց առաջինն ընկուզեայ փայտից քաջարուեստ քանդակագործութեամբ շինած է արևմտեան հիւսիսային մեծ սեան առաջ. այս գահի գմբէթը զարդարած է հինգ փոքրիկ կաթուղիկէներով: Ս. Էջմիածնի վանքում պահպանուած աւանդութեամբ այս գահը Հռովմից է բերուած, սրան վկայում է և Զամչեան պատմաբանն ասելով, թէ այդ գահը Իննովկենտիոս ԺԲ պապը նուէր է ուղարկած ամենայն Հայոց Նահապետ Կաթուղիկոսին 1697 (կամ 1699) թ. Իսկ երկրորդ գահը, առաջինից աւելի ընդարձակ, շինած է ընկուզի փայտից, գեղեցիկ զարդարուած է սատափի ու կրիայի ոսկրի կտորներով, հաստատուած է չորս սատափազարդ սիւների վերայ և ունի գլխին գմբէթ ու չորս փոքրիկ կաթուղիկէք: Այս գահը դրած է արևելեան հիւսիսային սեան առաջ, Աւագ սեղանի հանդէպը: Այս գահն ու երկու սատափազարդ դռները 1721 թուականին նուիրել են Զմիւռնիոյ հայ ժողովրդականք:

Բազմադարեան Տաճարիս պահարաններում գտանուում են հետևեալ սուրբ մասունք.

ա. Սուրբ Գեղարդն, որով Ղունկիանոս հարիւրապետը խոցեց Փրկչի՝ Քրիստոսի կողը խաչի վերայ:

բ. «Ցիսուսի խաչից իջուցանելու» հրաշագործ պատկերը: Այս պատկերն ազնիւ փայտի վերայ փորել է Ս. Յովհաննէս Աւետարանիչը:

գ. Կենաց Փայտի մանրիկք:

դ. Հայաստանի նախկին լուսաւորիչ Թադէոս առաքելոյ աջն և գագաթը:

է. Թովմաս Առաքելոյ աջն ու գագաթը:

զ. Պետրոս Առաքելոյ ճկոյթն ու ատամն:

է. Մատթէոս Աւետարանչի աջը:

ը. Մի պահարանի մէջ գետեղուած Յովհաննէս Կարապետի, Անդրէաս Առաքելոյ, Մարկոս աւետարանչի, Նիկողայոս Սքանչելագործի և Ս. Գէորգայ զօրավարի մասունքները:

թ. Սրբուհի Հռիփսիմեայ գագաթն և Ս. Գայիանէի մասունքը:

ժ. Ս. Գրիգորի՝ մեր երկրորդ Լուսաւորչի աջն և երկու երկաթեայ քերիչք ու գործիք, որոնցմով չարչարուեցաւ մեծ Նահատակը:

ժա. Ս. Գրիգորի որդու Արիստակէսի աջը:

ժբ. Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետի աջն և Նոյեան տապանի մի մասն, որ Ս. Յակոբը ստացաւ Հրեշտակից Մասիս սարում:

ժգ. Գետադարձ Պետրոս սքանչելագործ Կաթուղիկոսի խաչն, որով նա Սեբաստիայում 1019 թ. յունուարի 6 ին ջրօրհնեաց ժամանակ գետի ջրի ընթացքը դարձրեց:

Կան և այլ բազմաթիւ մասունք, որոնք պահուում են ոսկեայ և արծաթեայ տուփերում և ականակուռ աջերի ու խաչերի մէջ:

Ս. Աթոռոյ թանգարանում պահուում են բազմաթիւ թանգագին հին և նոր ոսկեայ, արծաթեայ ականակուռ և մարգարտայեռ եկեղեցական սպասներ՝ խաչեր, աւետարաններ, սկիհներ, բուրուառներ, խաչուառներ, գաւազաններ, գօտիներ, թագեր, սաղաւարտներ, վականներ, եմիփորոններ, շուրջառներ, փորուրարներ, ուրարներ, բազպաններ, կաթուղիկոսական քղեղներ, կօնքեռներ, շապիկներ, կանթեղներ, քշոցներ, խնկամաններ, միւռոնի սափորներ, կաթուղիկոսական գորգեր, վարագոյրներ, օթոցներ, հին և նոր դրամք գանազան ազգաց, մատանիք, պնակք, շքանշանք, և պատկերներ:

ՆՇԱՆԱՒՈՐ ԵՆ

ա. Սկիհ ոսկեայ Պետրոս (Քիւթիւր) կաթուղիկոսի:

բ. Խաչեր— 1 Յովհաննէս Թագաւորի, Շուշան տիկնոջ և նոցա որդի Արշոտ Թագաւորի խաչը. և 2 Պետրոս Գետադարձ կաթուղիկոսի խաչը:

գ. Խաչուառներ—հնութեամբ նշանաւոր է ըստ ստոյգ աւանդութեան Լուսաւորչի խաչուառը:

դ. Ոսկեայ բուրվառը:

է. Թագեր— 1 Խաչատուր կաթուղիկոսինը հնութեամբ. նոր—976 թ. 2 Փիլիպպոս կաթուղիկոսի և 3 Գալուստ վարդապետի թագերը:

Զ. Սաղաւարտ Ստեփաննոս վարդապետի ՃԽԶ—727 թ.

Է. Շուրջառներ— 1 Նշանաւոր են շատ հները առանց թուականի 2 Աղէքսանդր կաթուղիկոսինն և 3 Հնդկաստանի Նուիրակ Վրթանէս վարդապետի մետաքսեայ ասղէնկար շուրջառը։

Ը. Գաւազաններ— 1 Պետրոս և Եղիազար կաթուղիկոսների և 2 Առաքել պատմագրի։

Թ. Պատկերներ—Փրկչի յարութեան (մեծադիր) և Փրկչի փորձուիլը փարիսեցիներից (Ամստերդամից)։

Ժ. Ներսէս Շնորհալւոյ ոսկեզօծ ձուլածոյ արծաթեայ բաժակը 12 Առաքելոց պատկերներով. նուէր վեհ. Մակար կաթուղիկոսից։

Ժա Զանազան ազգաց հին և նոր դրամք, որոց մէջ նշանաւոր են հայ դրամք Հեթում և Լեւոն թագաւորաց։

Ժբ Հ.քանշան Նադիր Շահի Աբրահամ կաթողիկոսին շնորհած։

Ժգ Երկգլխեան արծիւք՝ նշանք կաթուղիկոսականք Պետրոս և Սիմէոն կաթուղիկոսաց և Պնակ Սիմէոն կաթուղիկոսի, նուէր Եկատարինէ Բ Կայսերուհւոյն Ռուսաց։

Նախնի պատմաբանները Մայր Տաճարին «Շողակաթ Աստուածածին» «Կաթուղիկէ եկեղեցի», «Մայր եկեղեցի», «Մայր Աթոռ» անուններն են տալիս, իսկ ընդհանրապէս նա կոչուում է «Սուրբ Էջմիածին»։

Ոմանք կարծում են, որ սկզբում սա միաբանից վանք չէր, այլ միայն կաթուղիկոսական Աթոռ, որ քաղաքական հանգամանաց պատճառով Մելիտէ կաթուղիկոսի ժամանակ փոխադրուեցաւ Դրուին, որովհետև կաթողիկոսութիւնն անկարող գտնուեցաւ ժամանակի բռնութեանց դիմադրելու։

Բայց որպէս զի Ս. Էջմիածնի հին տաճարը, Հայաստանեայց եկեղեցու հիմն, չկործանուի կամ չամայանայ բոլորովին, բարոք և օգտաւէտ համարեցին հաստատելու նորա մէջ վանական միաբանութիւն։ Այս մասին մանաւանդ նպաստաւոր եղաւ Հայաստանի մարզպան Վահան Մամիկոնեանն, որ և վանահայր կարգեց Մովսէս Խորենացիից յետ ամենից նշանաւոր հայ պատմագիր Ղազար Փարպեցի վարդապետին։ Ամեն կաթողիկոսները, նախարարներն և իշխաններն երբէք անխնամ և առանց խնամատարութեան չթողին այս նորահաստատ մենաստանը, որոյ մասին վկայում է և Սիւնեաց Ստեփաննոս եպիսկոպոսն, թէ ինչպէս Մովսէս Բ կաթողիկոսը

565 թ. կարգեց Կիւրիոնին վանահայր, մի և նոյն ժամանակ և արարատեան վիճակի քորեպիսկոպոս, որ վարեց այս իշխանութիւնն եօթն տարի, ըստ վկայութեան Ուխտանէս եպիսկոպոսի, և ապա նշանակուեցաւ Վրաց կաթողիկոս, որովհետև մինչև այն ժամանակ Վրաց ազգի կաթողիկոսները Ս. Էջմիածնի Հայրապետից ստանում էին իրանց կաթողիկոսական ձեռնադրութիւնը։ 596 թուականին Աբրահամ կաթողիկոսի ժամանակ Դուին քաղաքում ժողով եղաւ, ուր հրաւիրուեցաւ և Ս. Էջմիածնի վանքի Վանահայրը։

Ինչպէս յիշեցինք Կոմիտաս կաթողիկոսը 618 թ. Գլխովին վերանորոգեց Ս. Էջմիածնի եկեղեցին և վանքը։

Թէև սկզբում Էջմիածնի վանքը կաթողիկոսների և Հայ իշխանների խնամքով ու շնորհներով անկորուստ պահպանում էր իւր արտօնութիւնքն ու բարեշքութիւնը, բայց թշնամաց անդադար յարձակմանց և աշխարհաւեր արշաւանքների և կողոպտիչ հարստահարութեանց ժամանակ սկսաւ սակաւ առ սակաւ խանգարուել և ամայանալ։ Առաւել մեծ վնաս կրեց Ս. Էջմիածինն, երբ պատմական հանգամանքներից ստիպուած կաթողիկոսները սկսան տեղափոխուել այլ և այլ տեղեր, որովհետև Հայրապետները հետզհետէ հեռանալով բուն Հայաստանի ծոցից անձեռնհաս էին լինում անձամբ հոգալու Էջմիածնի Մայր տաճարի և վանքին խնամք տանելու վերայ։

Այո՛ Ս. Էջմիածինը բազմազան հալածանքներ կրեց թշնամիներից և հարստահարուեցաւ, անշքացաւ, յետին աղքատութեան հասաւ. բայց և այնպէս միշտ մեծ յարգանք և նշանակութիւն ուներ թէ ազգայնոց և թէ օտարաց առաջ։ Եւ երբ կրկին խախտուեցաւ Հայոց տերութեան հիմն և բոլորովին ջնջուեցաւ Հայոց թագաւորական իշխանութիւնը Լեւոն Զ-ի ժամանակ 1394 թուին և երբ ամեն կողմից կորստեան վտանգ սպառնում էր ոչ միայն Հայոց ազգին, այլ և Հայաստանեայցս եկեղեցւոյ գոյութեան ու դաւանութեան, այս դառն ժամանակ Հայոց ազգն ամեն կողմանէ յուսակտուր իւր ուշքն ու աչքը դարձրեց Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի վերայ, իբրև իւր ազգայնութեան և եկեղեցւոյ հաստատութեան միակ հիման վերայ։

Ուստի և Կիրակոս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ 1441 թ. բոլոր հայ ազգի ջանքով և համահաճ կամքով բազմաժամանակեայ թափառականութիւնից յետ կաթողիկոսական Աթոռը վերստին փոխադրուեցաւ Ս. Էջմիածին և այնուհետև Հայրապետութեան աթոռը միշտ անշարժ մնաց Էջմիածնում մինչև ցայսօր և կմնայ յաւիտեան:

Այստեղ Ս. Գրիգոր Լուսաւորչից մինչև Մելիտէ 150 տարուայ ընթացքում (302-452) նստան տասն և մէկ կաթողիկոսներ. Մելիտոսից մինչև Կիրակոս Վիրապեցին 989 տարուայ ընթացքում (452—1441) 82 կաթողիկոսներ նստան զանազան տեղերում: Իսկ կաթողիկոսական աթոռի 1441 ին Ս.Էջմիածին վերադառնալից յետ Կիրակոս կաթողիկոսից մինչև ներկայ Վ.Եհափառ Մակար Ա Կաթողիկոսը 445 տարուայ ընթացքում յաջորդաբար մէկը միւսից յետ Հայրապետական աթոռը նստան 47 կաթողիկոսներ. որոնցից շատերը, ինչպէս ցոյց տրուեցաւ վերևը, եռանդագին և անխոնջ աշխատութեամբ հոգալով նորանոր շինութեանց և վերանորոգութեանց վերայ, ջանք արին Մայր վանքիս բարեկարգութեան, Նոր Ուխտի մանկանց լուսաւորութեան և Ս. Տաճարիս պայծառութեան համար:

Ներկայ Վ.Եհափառ Մակար Կաթողիկոսը Ս. Տաճարին աւելի վրսեմութիւն տալու համար արտաքուստ, բոլոր բակի հողը մի կանգնաչափ վեր առնել տուեց և եկեղեցին շրջապատող աստիճանների փոխարէն պատեց նրան կիսորմով: Տեսնում են պատրաստութիւնք և ամբողջ տաճարը վերանորոգելու համար թէ արտաքուստ և թէ ի ներքուստ: Նորին Օծութիւնը գարդարեց Մայր Աթոռն և տպարանի հոյակապ շինութեամբ:

Թէև զանազան ժամանակ Էջմիածնի կաթուղիկէ եկեղեցին ենթարկուեցաւ նորոգութեան, երբեմն մասամբ և երբեմն ամբողջապէս նորոգուեցաւ, բայց հաւաստի աւանդութիւնը վկայում է, որ Տաճարը մինչև այսօր պահպանել է անխախտ իւր իսկական հիմունքը, իսկական դրութիւնն, որմոց բարձրութիւնը, իւր լայնութիւնն ու երկայնութիւնն այնպէս, ինչպէս սկզբում հիմնադրել էր Ս. Գրիգոր Պարթևը: Ի ներքուստ եկեղեցու երկարութիւնը արևելքից մինչև արևմուտք $31^1/_2$ կանգուն է, առանց հաշուելու Աւագ սեղանի տարածութիւնն, որ $8^1/_2$ կանգուն է. ուրեմն ի միասին 40 կանգուն է (առանց հաշուելու նոր պահարանի տարածութիւնը). լայնութիւնը հիւսից հարաւ $28^1/_2$ կանգուն է, յատակից մինչև Մեծ կաթուղիկէի առաստաղը համաչափ է երկարութեան, այն է $31^1/_2$ կանգուն, իսկ յատակից մինչև վերին կամարները 19, և մինչև ստորին կամարները 15 կանգուն է:

Իսկ արտաքուստ, առանց հաշուելու նորակառոյց գմբէթայարկ պահարանների տարածութիւնը, տաճարի երկարութիւնն է 50 կանգուն, լայնութիւնը մէջտեղում 42 կանգուն իսկ ծայրերում 35 կանգուն է, բարձրութիւնն արտաքուստ 51 կանգունից փոքր ինչ աւելի է:

Հետզհետէ արած նորոգութիւնք թէև տուել են Տաճարին ճարտարապետական տարբերութիւնք և չափերի անհաւասարութիւն. բայց այնուամենայնիւ նա էլի շատ վսեմ է ու հոյակապ և իւր կաթուղիկէներով յիշեցնում է Բիւզանտեան ճարտարապետութիւն, կրելով իւր վերայ եւ բուն հայկական ոճի ու ճաշակի տպաւորութիւն, մանաւանդ հոյակապ է զանգակատունը բարձրութեամբ, թեթևութեամբ ու գեղեցիկ դրուակներով: Բայց ինչ կվերաբերի այն տպաւորութեան, որ մարդ զգում է այս բազմադարեան Տաճարը մտնելիս, գուցէ աւելի հաւաստի լինի Ռուս ճանապարհորդ Մուրավիվի վկայութիւնն, որ աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերելու: Նա ասում է. «Զերմեռանդութեան զգացմամբ լցուում է հոգիդ, երբ մտնում ես Ս. Գրիգորի այս հնադարեան Տաճարն, որ բարձր է. բայց մանայլ, լուսաւորուած Մեծ կաթուղիկէի տաճարներու պատուհաններով և մի կանթեղով միջին սեղանի (Իջման—տեղի) գլխին: Սա կառուցած է չորս սիւների մէջ, որոնք պահում են կաթուղիկէն և սիրտդ ակամայ ձգտում է և մղում է ձեզ դէպի այս սեղանի պատուանդանն, ուր Հայաստանի Լուսաւորչին երևեցաւ աքանչելի տեսիլն և որտեղից իրրև լուսափայլ Շողակաթ աղբիւրից հոգևոր լուսաւորութիւնը ծաւալեցաւ բոլոր Հայաստանի վերայ: Այսպիսի տեղերը, նահատակների աղօթախառն քրտնքով ու արտասուքով ոռոգուած լինելով, մարդոց հոգւոց վերայ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

առանձին իմն տպաւորութիւն են գործում, որ և նոցա վերայ շինած տաճարների համար աւելի հաստատուն (իմանալի և խորհրդաւոր) հիմն է դառնում քան մարդկային բազմադանձ հարստութիւնք»:

«Այստեղ աղօթում էր Սուրբն Գրիգոր և տան և հինգ դարերից յետ դարձեալ այստեղ գալիս են (Հայք) աղօթելու և անարիւն պատարագ մատուցանելու, թէև շատ ժամանակների և ազգերի մրրիկներ իրանց աւերիչ ու քայքայիչ գօրութիւնով անցել են նախաթոռ տաճարիս գլխով»:

Ջերմեռանդութիւնն աւելի գօրանում է, երբ յիշում ենք այն աւանդութիւնը, թէ Միածնի (Բանին) սուրբ սեղանը կառուցած է այն տեղում, ուր կանգնած էր առաջին սեղանն, որոյ վերայ Նոյ նախահայրը իւր գոհութեան պատարագն արաւ մարդկութեան փրկութեան համար իւր ընտանիքի միջնորդութեամբ: Սրանով պարզուում է Մեծ Գրիգորի տեսիլքը, թէ ինչու Աստուծոյ Միածին որդին անարիւն պատարագի մատուցման համար յատկապէս այնտեղը ցոյց տուեց, ուր պատարագ մատուցել էր նոյը»:

Եթէ այս սուրբ բագմադարեան Տաճարը, եթէ Հայոց քրիստոնէութեան այս միակ խանձարուրը, Հայաստանեայց Եկեղեցոյ հաստատութեան այս հիմն այնպիսի վսեմ և սրտաշարժ տպաւորութիւն է անում օտարազգիների սրտերի և հոգւոց վերայ, որպիսի՛ աւելի ևս զգալի տպաւորութեամբ, որպիսի՛ անձկայրեաց և անսահման ջերմեռանդութեամբ և որպիսի՛ սրբազան զգացմունքով պիտի լցուն մեր երկրորդ Լուսաւորիչ Գրիգոր սուրբ Հօր հարազատ և հաւատարիմ զաւակների սրտերն, երբ մտնում են այս սրբութեան Տաճարն ու պատկառանօք երկրպագութիւն են մատուցանում Աստուծոյ Միածին Որդւոյ իջման այս սուրբ սեղանին:

Եւ արդ այս աքանչելահրաշ սուրբ Տաճարս և Մայր Աթոռս, իւր սուրբ Ուխտով իւր սեպհական կալուածներով մինչև ցայժմ վայելած է և յոյս ունի միշտ վայելելու ազատութիւն և ապահովութիւն աղօթելով Աստծուն, որ պարգևէ ցանկալի առողջութիւն և երկար կեանք Օգոստափառ Կայսեր և սորա բոլոր գերդաստանին:

809

809

«Ազգային գրադարան»
NL0027490